



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՀԻՂՐՈՐԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Հիդրոերկրաբանական տեղեկատվություն**  
(ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար)

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյան փողոցում Երևանի քաղաքապետարանի կողմից ոռոգման նպատակով նախատեսվող 1 (մեկ) հորատանցքի հորատման վերաբերյալ**

Հորատանցքը նախատեսվում է հորատել Երևան քաղաքի Շահամիրյան փողոցի հետևյալ կոորդինատներում՝

$X=40^{\circ} 08' 42.7''$

$Y=44^{\circ} 28' 54.5''$

$H = 917մ$

(Նշված կոորդինատները ըստ տարբեր GPS-ների կարող են տատանվել  $\pm 20մ$  սահմաններում)

Տարածքում օդի բազմամյա միջին տարեկան ջերմաստիճանը  $11.7^{\circ}C$  է, բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը՝ 302 մմ, գոլորշիացումը՝ 420 մմ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական - ժամանակակից գետահեղեղատային /ալյուվիալ-պրոլյուվիալ/ առաջացումները, որոնք ներկայացված են փուխր բեկորային և կավային նստվածքներով:

Նախագծվող հորատանցքին բնորոշ է հետևյալ երկրաբանական - հիդրոերկրաբանական կտրվածքը.

0.00 – 4.0 գետազլաքարեր ավազակավի լցոնով ( $Q_4$ )

4.0 – 57.0 գետաքար-զլաքար ավազի լցոնով, 33.3մ խորությունից ջրատար ( $Q$ )

57.0 – 57.5 ավազակավ ( $Q$ )

57.5 – 63.0 կավ, ջրամերժ ( $N_2^{1S}$ )

Ջրերը հորատանցքում կվերականգնվեն շուրջ 33.0մ խորությունում:

Հորատանցքը կարելի է հորատել 394մմ տրամագծով և ամրակապել 324մմ տրամագծի խողովակներով: Ամրակապող խողովակների սյան 38.0 – 55.0մ խորության միջակայքում կամ ջրատար հորիզոնի սահմաններում պետք է տեղադրվի ծակոտկեն զտիչ:

Համաձայն տարածքում հորատված հորատանցքերի տվյալների, նախագծվող հորատանցքի տեսակարար ծախսը սպասվում է 5.0/վ.մ:

Հորատանցքի 55.0մ խորությունում կարելի է տեղադրել ՅԼԲ-8-40-65 մակնիշի խորքային պոմպ՝ 11.1/վ արտադրական հզորությամբ:

Ջրերի ջերմաստիճանը սպասվում է 11.0°C: Ըստ քիմիական կազմի տեղամասում տարածված են հիդրոկարբոնատային կազմի ջրերը, որոնց ընդհանուր հանքայնացումը մինչև 1.7գ/լ է, ընդհանուր կոշտությունը՝ 17.8մգ.համ/լ, ջրածնային ցուցիչը (рН)՝ – 6.8:

Նախատեսվող հորատանցքի համար նշված երկրաբանական-հիդրոերկրաբանական կտրվածքը, հիդրոերկրաբանական պարամետրերը, ջրերի ջերմաստիճանը և ջրատար հորիզոնների տեղադրման միջակայքերը նախագծային կամ սխեմատիկ են: Դրանք պետք է ճշտվեն հորատման ընթացքում ամրակապման ժամանակ ծակոտկեն զտիչի ճիշտ տեղադրման համար, իսկ փորձնական ֆիլտրացիոն աշխատանքների հիման վրա պետք է ընտրվի խորքային պոմպի տիպը և տեղադրման խորությունը:

Պատվիրատուն պարտավորվում է հորատման աշխատանքների ավարտից հետո փաստացի տվյալներով (կազմված և հաստատված հորատող կազմակերպության կողմից) ներկայանալ «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ՝ հորատանցքի անձնագիրը կազմելու և ստանալու համար:

Համաձայն Ջրային օրենսգրքի 19.1 հոդվածի հիդրոերկրաբանական մշտադիտարկումների վարումը պարտադիր է, որի համար հորատանցքում լրացուցիչ պետք է տեղադրվի 50մմ տրամագծի պլաստմասե խողովակ՝ շուրջ 55.0մ երկարությամբ:

Կազմեց՝ հիդրոերկրաբ. հետազոտ. բաժնի պետ

Ա.Հակոբյան

Ստուգեց՝ գլխավոր հիդրոերկրաբան

Հ. Աղինյան



Լ.ԱՐԻՉՅԱՆ



1 (մեկ) հորատանցքի հորատման պեղաբեդյալ

Կազմեց՝ Հիդրոտեկնիկաբ. հետազոտ. բաժնի պետ

1126331

06.07.2023a.